

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338.98
L-42

16.04.2013

115 JAN 2013

411-1509

Ը Ն Թ Ա Ց Ի Կ
Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը
 Հ Ա Ր Ց Ո Ւ Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ո Վ

1. ԻՆՁ Ե ՈՒՐԱԼ-ԿՈՒՋՆԵՑԿԻ ԿՈՄԻՏԵ
2. ԻՆՁ Ե ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԻՐԵՆԻՑ ԿՈՒՋՆԵՑԿ-ՍՏՐՈՅԸ
3. ԻՆՁՊԵՍ Ե ԸՆԹԱՆՈՒՄ ԱՎՏՈ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒՅՑԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
4. ԵՆ ԻՆՁՊԵՍԻ ԶԵՆՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՎԵՐԱԿԱՆՈՒՑՎՈՒՄ 1931 ԹՎԻՆ ՅԵՎ ԻՆՁՊԵՍԻՆԵՐՆ ԵՆ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

338.98:6
 Ը - 42

APM
3-574a
338-9816
L-42

AM-1309

3-574a

Ը Ն Թ Ա Ց Ի Կ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Հ Ա Ր Ց Ո Ւ Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ն Ե Ր Ո Վ

1. Ի՛նք է ՈՒՐԱԼ-ԿՈՒՋՆԵՑԿԻ ԿՈՄԲԻՆԱՏԸ
2. Ի՛նք է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԻՐԵՆԻՑ ԿՈՒՋՆԵՑԿԱՏՐՈՅԸ
3. Ի՛նք՞ԵՍ է ԸՆԹԱՆՈՒՄ ԱՎՏՈ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒ-ՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
4. Ե՛Լ Ի՛նք՞ԻՍԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՒՄ 1931 ԹՎԻՆ ՅԵՎ ԻՆՉՊԻՍԻՆԵՐՆ ԵՆ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

22429

31.950

Պետերատի տպարան
Գլավլիտ 7422
Հրատ. № 2143
Պատվեր № 1021
Տիրած 3000

Քարգանց Գ. ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆ
ՍՐԲԱԳՐԵՑԻՆ՝ Ա. ՅՈՎՄԱՂՅԱՆ ՅԵՎ Ե. ՀԱՐՈՒՅՑՈՒՆՅԱՆ
Հանձնված է արտադրության 26 մարտի 1932 թ. Մտ. Յ. Ա
Ստորագրված է տպագրելու 14 ապրիլի 1932 թ.

238-87

ՀԱՐՑ: Ի՞նչ է Ուրալ-Կուզնեցկի Կամբինատը:

ՊԱՍԱՍԽԱՆ: Մեզանում, ԽՍՀՄ Միության մեջ նոր վերջացած 1931 թվականն ամենուժեղ շինարարության թվականն էր, աշխարհում չտեսնված տեմպերի մի թվական: 1931 թվին մենք ավարտեցինք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: 1931 թվին մենք կապիտալ շինարարության մեջ ներդրեցինք մոտ 6 միլիարդ ուսուրի և գործարկեցինք հարյուրավոր գործարաններ, Փարբիկաներ, հիդրոէլեկտրակայաններ, հանքահորեր, առանձին ցեխեր ու ագրեգատներ: Այս տասնյակ զիզանտները, վոր մենք ավարտեցինք համարյա անցյալ տարում, իրենց մեծությամբ հանդիսանում են ամենախոշորները, իսկ սարքավորումով ել՝ ամենակատարելագործվածներն աշխարհում: Մեր ամբողջ սոցիալիստական շինարարության այդ հաջողությունները, ինչպես և յերկրի ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, կուլակութայն՝ վորպես դասակարգի լիկվիդացիայի Փրոնաներում ձեռք բերված հաջողությունները հանդիսանում են մեր կուսակցության գլխավոր գծի վերջնական հաղթանակը:

ԽՍՀՄ Միության սոցիալիստական հսկայական շինարարության 1931 թվի այդ հանրազումարները հասկացես դատուն են երևում մինչ այժմ չեղած այն սուր և խիստ ճգնաժամի Փոնի վրա, վոր տիրում է ներկայումս բոլոր կապիտալիստական յերկրներում անխտիր:

1931 թվի հանրազումարները պարզապես ցույց են տալիս, վոր «Կապիտալիզմի ուղին-դա ճգնաժամի, տնտեսական անկման և բացառիկ դժվարությունների ուղին և ժողովրդական մասսաների համար: Սոցիալիզմի ուղին-դա անմահ տնտեսական վերելքի և քաղաքի ու գյուղի յայն մասսաների գրության արմատական բարեխալման ուղին» (Մոլոտով):

Ի՞նչպիսի նոր կառուցվածքներ ենք շինում այժմ և ի՞նչպիսիներն ենք ավարտել 1931 թվին: Ի՞նչ չափով են նրանք մեզ առաջ շարժել թե՛ յերկրի ինդուստրացման և թե՛ ոտարյերկրյա կախումից ազատագրվելու ուղղությամբ:

Թե՛ 1931 թվի շինարարության մեջ և թե՛ նախկին տարիներում կուսակցության կողմից վորպես գլխավոր հենարան է ընդունվել նոր մետաղագործական գործարանների ու նոր անխահորերի կառուցումը և այդ պատճառով ել ահա հարկավոր է հարյուրավոր նոր գործարանները, ձեռնարկություններն ու ելեկտրոկայանները լցնել մեքենաներով, դադրյահներով և սարքավորումով: Նոր գործարաններից ու Փարբիկաներից ել, իր հերթին մենք պահանջում ենք արտադրել մեքենաներ, դադրյահներ, տրակտորներ, զանազան կոնստրուկցիաներ, գործիքներ և այլն, իսկ վորպեսզի կարողանան կատարել իրենց ծրագրերը, այդ նոր ձեռնարկություններն, ինչպես և արդեն գործողները, պահանջում են առաջին հերթին ահազին քանակությամբ մետաղ: Ինքը շինարարությունը ևս շատ մետաղ է կլանում:

Մինչև այժմ մետաղ և վառելիք մատակարարել է ԽՍՀՄ Միության հարավային կողմում գտնվող վառելիք-մետաղագործական միակ բաղան

Դոնի ավազանը: Սակայն մեր ամբողջ Միության մեջ սոցիալիստական տնտեսությունը զարգանում է այնպիսի տեմպերով, վոր նրա համար քիչ է միայն Դոնբասի ածուխը, ինչպես և քիչ է մետաղի այն քանակը, վոր կարող են տալ Հարավային գործարանները:

1930 թ. մայիսի 15-ին մեր կուսակցության կենտրոնը մատնանշեց, վոր «... յերկրի ինդուստրացումը հետագայում չի կարող հենվել միայն ածխամետաղագործական հարավային մեկ բազայի վրա: Յերկրի արագ ինդուստրացման կենսական անհրաժեշտ պայմանն է հանդիսանում ստեղծել Արևելքում յերկրորդ հիմնական ածխամետաղագործական կենտրոնը ու Սիբիրի ամենահարուստ ածխամետաղահանքերը»:

Կուսակցության XVI-րդ համագումարն էլ հաստատեց կենտրոնի այդ վորոշումն ու առաջարկեց նրան՝ ամեն ջանք գործ դնել մոտակա ժամանակաշրջանում ստեղծելու մի նոր ածխամետաղագործական գործող բազա՝ հանձինս Ուրալ-Կուզնեցկի կոմբինատի»:

Ուրալ-Կուզնեցկի կոմբինատի կրճատ ՈՒԿԿ-ի կառուցման գործը դարձել է ամբողջ բանվոր դասակարգի գործը: Բառիս բուն նշանակությամբ ամառի այն վայրերում, ուր 2-3 տարի սրանից առաջ անանցանելի անտառներ կամ տափաստաններ էին գտնվում, կառուցվել ու այժմ էլ կառուցվում են ծանր արդունարություն գլխավորներ: ՈՒԿԿ-ի կազմի մեջ են մտնում Ուրալ, Արևմտյան Սիբիրը, Հյուսիս-Արևելյան Կազակստանը, Բաշկիրան և Միջին Վոլգայի Սալիլի շրջանը, վորոնց միլիարդավոր չափերի հասնող ածուխը և հանքերի, գունավոր մետաղների ու զանազան հանքային հումքերի հսկայական պաշարներն այդ կոմբինատի ստեղծման համար ամուր բազա յեն ծառայում:

Այդ՝ իր մեծությամբ աշխարհում դեռևս չտեսնված կոմբինատի մեջ պիտի մտնեն մետաղագործական, մեքենաշինական, քիմիական շատ գործարաններ, ինչպես և շատ էլեկտրոկայաններ ու գունավոր մետաղներ, արակտորներ, դաղբյուրներ, գործիքներ և այլն պատրաստող գործարաններ: Այդ ձեռնարկություններից շատերն արդեն կառուցվում են, իսկ նրանցից մի քանիսներն արդեն կառուցված և գործարկված են կամ գործարկվում են հետզհետե:

Ավարտված է Մազնիտոգորսկի գլխատի առաջին մասը (հերթը), վորը պիտի տա տարեկան յերկուս և կես միլիոն չուգուն (թուջ), ինչպես և Կուզնեցկի գլխատի առաջին մասը, վորի մասին կիսոսենք առանձնապես: Այդ կառուցվածքները նստել են ավելի քան մեկ միլիարդ ուրբլի:

Կուզնեցկատրոյը, վոր իր մեծությամբ այժմ մետաղագործական յերկրորդ գործարանն է իր առաջնությունը գիշեր և Մազնիտոգորսկին: Իսկ մի տարուց հետո յեկ այդ նույն Կուզնեցկի գործարանն իր մեծությամբ արդեն պիտի համարվի յերրորդը, վորովհետև Տազիլում (Ուրալում) արդեն սկսված է նրանից մեկ և կես անգամ ավելի մեծ մետաղագործական մի ուրիշ գործարանի կառուցումը: Տազիլի գործարանը տարեկան պետք է տա 1700 հազար տոնն չուգուն, մոտ 2 միլիոն տոնն պողպատ և մեկ ու կես միլիոն տոնն էլ գլոցածո յերկաթ: Նրա արտադրանքն առաջին հերթին պիտի տրվի Սվերդլովսկի մեքենաշինական և մետաղյա կառուցվածքներ պատրաստող Նիժնեայդիլի գործարաններին: Վերջնական ժամկետներ են տրված կառուցողներին 1931 թ. ապրիլին: Վերջնական ժամկետներ են տրվում կառուցման Տաջդալում արդեն մաքրվել-պատրաստվել է այդ գլխատի կառուցման տեղը, իսկ 1933 թվի հունվարի 1-ին արդեն նա պիտի տա առաջին չուգունը: Ներկայումս նրա կառուցման վայրում ավելի քան 10 հազար շին

ճարարներ պայքարում են վերահիշյալ ժամկետի իրադրոժման համար:

Մինչև այժմ Ուրալի համար մեքենաների ու կահավորման մեծագույն մասը մենք բերում է յինք հարավային գործարաններից: Սակայն Ուրալում ու Սիբիրում մեքենաների կարիքն որովորեա՞ծում է, վորի հսկանքով և միության Արևելյան մասին անհրաժեշտ է ունենալ իր մեքենաշինական գործարանները, այն էլ այնպիսի գործերը, վորոնք կարողանան համապատասխանել այդ շրջանի ընդհանուր դարգագմանը:

Այդպիսի գործարաններից մեկն արդեն կառուցվել է Սվերդլովսկից 8 կիլոմետր հեռավորության վրա, վորտեղ յերեք տարի սրանից առաջ խիտ անտառ էր, և արդեն ուրալյան այդ նոր մեքենաշինական գլխատի համարյա բոլոր ցեխերն էլ գործի յեն անցել: Այդ գլխատը-Ուրալ-մաշը տարեկան պետք է տա 100-150 հազար տոնն արտադրանք, վորպես մետաղագործական գործարանների, դարիչ Փարբիկների, մարտենների, գլանիչ դաղբյուրների ու զանազան խոշոր մեքենաների համար յուրհըրդային սարքավորում: Ուրալմաշի մեծությամբ մասին կարելի յե դադափար կազմել հենց միայն այն բանից, վոր մենակ նրա մեխանիկական ցեխը 55 քառակուսի հեկտար տարածություն է զբաղում: Այս տարի արդեն այդ գործարանը կտա 16 հազ. տոնն յերկաթե շինվածքներ և 35 հազար տոնն մետաղի կառուցվածքներ:

Սալիլովի շրջանում էլ հողի տակ բացառիկ հարստություններ են թաղանթված: Այստեղ կան դարձնադույն ու կարմիր յերկաթաքար, կլավարյիտ, մազնեկիտ, տալկ, գրանիտ և թանգազին քարեր: Այդ բնական հարստությունների բազայի վրա յեկ Սալիլովի շրջանում արդեն կառուցվում են հանքային ներքերի ու տալի գործարաններ, նույնպես և հիմնվում են մազնեկիտի հանքավայրեր: Կուսակցության կի-ի վորոշմամբ արդեն ձեռնարկված է Սալիլով-Կարադանդի ածխամետաղագործական կոմբինատի նախագծումը:

Հանածոները, ածուխն ու կոքսը վերջին հաշվով տալիս են մետաղ: 1931 թվին Կուզբասում հիմնվել ու շահագործման մեջ են դրվել այնպիսի հանքահորեր, վորոնց արտադրողականությունը տարեկան հասնում է մոտ 30 միլիոն տոննի (ածուխ): Իսկ Կուզնեցկի ավազանի կենտրոնում էլ-Կեմերլովում կառուցվում է կոքսաքիմիական կոմբինատ, վորը պետք է տա տարեկան Ուրալի մետաղագործությունը 600 հազար տոնն կոքս: Այդ կոմբինատն առաջինն է, վոր նախագծվել է Սորհրդոյին Միության մեջ. նրա վառարաններն էլ շենվում են յուրհըրդային աղյուսից:

ՈՒԿԿ-ն, բայց վոչ միայն ՈՒԿԿ-ն, այլև ամբողջ Միության մեքենաշինական արդյունաբերությունը և, առաջին հերթին, ավտոտրակտորայինը պահանջում է բարձր վորակի պողպատ: Ծիշտ նշանակված ժամկետին կառուցվել ու 1931 թվի հուլիսին գործարկվել և Ֆերրոձուլվածքներ Զելյաբինսկի գործարանը՝ 10 հազար տոնն լավորակ պողպատի արտադրողականությամբ: Այդ գործարանը տարեկան պետք է արտադրի 26.000 տոնն պինդ ձուլվածքներ: Ամբողջ գործարանը պիտի նստի 27 միլ. ո.: Ցարական Ռուսաստանում Ֆերրոձուլվածքների արտադրություն չի յեղել, բայց նախած դրան, գործարանի այժմյան աշխատակիցներն արդեն տիրապետել են Ֆերրոձուլվածքների արտադրության տեխնիկային, այնպես վոր մեր արտադրանքի վորակը բնավ հետ չի մնում արտասահմանյանից: Ֆերրոձուլվածքների Զելյաբինսկի գործ

ծարանն այդպիսով կազատի մեկ ամեն տարի արտասահմանից մոտ 40 միլիոն ութըու այդ մետաղները բերել տալուց :

Մինչև այժմ մենք ամեն տարի քիչ վոսկի փող չենք ծախսել նաև արտասահմանից նիկել ներմուծելու համար : Մինչև հիմա իՍՂ Միության մեջ չեր արտադրվում այդ չափազանց թանկագին գունավոր մետաղը : Մակայն մենք շուտով կկարգավորենք նաև նիկելի մեր իսկ սեփական արտադրության գործը : Ներկայումս արդեն Ուրալում հայտաբերված են նիկելի հանքեր և նրանց կենտրոնում—Ուֆալիյում—կառուցվում է նիկելի գործարան՝ տարեկան 3 հազար տոննի կարողությամբ : Արդեն լայն ծավալ են ընդունել այդ գործարանի դարբնոցի, մեխանիկական ցեխի և այլնի կառուցման աշխատանքները : Ուֆալեյ կայարանից ել մինչև գործարանի կառուցման տեղն անց է կացված յերկաթուղային ղիծ : Այդ գործարանը պետք է գործարկվի այս տարվա հոկտեմբեր ամսին :

Ուրալ-Կուզնեցկի կոմբինատի կազմի մեջ են մտնում նաև Չելյապցովյան 16-րդ համագումարի հանած վորոշումը կենսագործվում է պատմականորեն շատ կարճ ժամկետներում : Մենք դեռևս վոչինչ չենք ասել նաև Ուրալմեդստրոյի, այդ՝ Յեկրոպայում, ամենամեծ պղնձաձուլիչ գործարանի մասին, վոր ոժտված է տարեկան մոտ 40 հազար տոնն պղնձի արտադրողականությամբ : Այդ գիղանտի առաջին մասն ու դոտիչ Փարբին արդեն կառուցված են : Ուրալում ընդարձակվում են ներկայումս գործող մետաղագործական գործարանները : Որինակ՝ Բելյորեցկի գործարանը (Բաշկիրիայի ԱՄՍՂ) այժմ տալիս է 80 հազար տոնն արտադրանք, իսկ Նետոհետե ընդարձակվելով ու կոմբինատի վերածվելով, 1933 թվին նա պիտի տա տարեկան 200 հազար տոնն բարձրորակ պողպատի շինվածքներ :

Ուրալ-Կուզնեցկի կոմբինատի կազմի մեջ են մտնում նաև Չելյապցինսկի առաջատրային և Բերեզնիկովի քիմիական կոմբինատները, վորոնց համար ծախսված են արդեն հարյուր միլիոնավոր դոլմարներ : Գրանցից առաջինը կավարտվի 1932 թվին, իսկ յերկրորդի առաջին մասը—Բերեզնիկովն արդեն պատրաստ է և մասնակի արտադրանք է տալիս : Ներկայումս, Ուֆալեյի հիմնական ողակը հանդիսացող Ուրալում կառուցվում են ավելի քան վաթսուներեք ձեռնարկություններ, վորոնցից մի մասն արդեն գործարկման մեջ է, իսկ մնացածներն ել պետք է պատրաստ չինեն 1932 թվին : Այս տարի Ուֆալեյի կազմակերպման գործը պետք է ընթանա և՛ ավելի բարձր տեմպերով, այն է՝ պետք է ավարտել Մագնիտոգորսկի գործարանի, Բերեզնիկովի յերկրորդ մասի, Կուզնեցկի, Տագիլի և մյուս գործարանների կառուցումը, ինչպես և պետք է սկսել նաև մի շարք նոր խոշոր գործարանների կառուցումը, վորոնցից ամեն մեկը պետք է յինի աշխարհում ամենամեծ ու տեխնիկապես ամենակատարելագործված ձեռնարկությունը :

Մետաղագործական գործարաններ կառուցվում են վոչ միայն Ուրալ-Կուզնեցկի կոմբինատում : Վիթիարի գործարաններ են կառուցվում և Հնեքն ել ընդլայնվում են նաև իՍՂ Միության հարավային մասում : 1931 թվին, որինակ՝ սկսվել և այս տարվա կեսերին ավարտվելու յեն Լիպեցկի ու Տուլայի գործարանները՝ յուրաքանչյուրը տարեկան 350 հազար տոնն չուգունի կարողությամբ : Հարավային մետաղագործության հին փոքրիկ հրահալոցները (դոմնաները) արդեն սալրում են ի-

քենց վերջին օրերը : Մակեյեվի, Կադլեյեվի և մյուս գործարաններում քրանց փոխարինելու յեն դալիս արդեն հարյուր հազարավոր տոնն չուգուն արտադրող հրահալոց-ղիղանները :

Յերկրի ինդուստրացման համար, ըստ ծրագրված պլանի, մենք պետք է ստանանք 1932 թվին 9—10 միլիոն տոնն չուգուն : Ահա այս է պատճառը, վոր մենք կառուցում ենք այդքան մետաղագործական գործարաններ : Մակայն չուգունի ձուլման համար մեկ հարկավոր է ամենից առաջ կոքս : Մեր նոր կոքսահան կառուցվածքները, վորոնցից յուրաքանչյուրն ունի հարյուր հազարանոց տոննի կարողություն և տասնյակ միլիոնավոր ուլրլիների արժեք, ներկայումս արդեն աշխատում են Գորլովկում, Ձերժինսկու անվան գործարանում, Ալչեվսկում ու Ռուստչենկովում : Կոքսահան մեքենաներ են կառուցված արդեն նաև Կուզնեցկաարոյում ու Մադնիտոսարոյում : 1932 թվին կգործարկվեն նույնպես և Յենակեյեվի, Կրամատորի, Գուբախի, Կամերովի ու մյուս գործարանները :

Մակայն կոքսը ևս, իր հերթին, ամուխ է պահանջում : Այս պատճառով ել տասնյակներով են այժմ պատրաստվում մեքենայացված նոր գորեղ հանքահորեր : Մոտ յերեք տասնյակ հանքահորեր արդեն շահագործման մեջ են դրված Դոնբասում, վորոնց թվում նաև Ռուստչենկովի շրջանի № 17 բխը՝ որական 2 հազար տոնն հանութով : Տասնյակ նոր հանքահորեր են արդեն հիմնված ու կառուցված նույնպես Կուզնեցկի ալլալանում և Կարադանդում :

ՀԱՐՑ : Ի՞նչ է ներկայացնում իրենից Կուզնեցկաարոյը :

ՊԱՏԱՍԽԱՆ : Ուրալ-Կուզնեցկի կոմբինատի ստեղծման համար՝ վորպես հիմք են հանդիսանում քարածուխն ու ուրալյան հանքերը : Արևմտյան Սիրիում, Այրալյան լեռների հենց նախադրան մոտ է ընկած Կուզնեցկի անխային ավազանը : Ածխի պաշարներն այստեղ կազմում են մոտ 400 միլիարդ տոնն : Դա վեց անգամ շատ է այն պաշարից, վոր ունի իՍՂ Միության հին, հիմնական հնոցարանը—Դոնբասը : Բացի այդ, Կուզնեցկի ամուխը վորակով բարձր է Դոնբասինից, իսկ գնով ել ավելի էժան : Կուզնեցկի ավազանում ամենահարուստ հանքավայրը Պրոկոֆյեվինն է : Վերջինս կարողությունը (հաստությունը) հասնում է 8—16 մետրի : Պրոկոֆյեվի անխաչերտերի մեծ մասը կոքսացող է : Այս հանքավայրում այնպիսի շերտ կա, վոր կոչվում է «գորեղ» : Ղրա ամուխը հանդիսանում է վորպես հրահալոցային, վորովհետև նրան ամուծ են հրահալոցների մեջ այնպես, ինչպես կա՝ առանց կոքս դարձնելու : Դրանք են ահա Կուզնեցկի քարածխային ավազանի պաշարներն ու հատկությունները : Իսկ Ուրալն ել ունի յերկաթահանքի ահալին պաշարներ, վոր ըստ վոչ լրիվ տվյալների, հաշվում են մոտ մեկ միլիարդ տոնն :

Ուրալ-Կուզնեցկի կոմբինատը տասնյակ ձեռնարկություններ է կառուցում, վորոնք արդեն շարքեր են կազմել պատրաստի կորպուսներով կամ րադմաթիվ կառուցվածքներով : Բայց կառուցվող այդ գործարանների մեջ կենտրոնական տեղն են զրավում Մադնիտագորսկի և Կուզնեցկի յերկու մետաղագործական գիղանները : Մադնիտագորսկի գործարանն անենալով իր հանածոները, պետք է աշխատի Կուզնեցկի անխով, իսկ

Կուղնեցիի գործարանն էլ, կառուցված լինելով ամխային ավազանի կենտրոնում, պետք է ստանա Մագնիտադորսկի հանածոները:

Ի՞նչ դեր է խաղում Կուղնեցիի գործարանն Ուրալ-Կուղնեցիի կոմբինատի մեջ և ամբողջ յերկրի ինդուստրացման գործում:

Կուսակցութունը մեր յերկրի բանվոր դասակարգի ու համայն աշխատավորութեան առջև խնդիր է դրել 1932 թվին տալ 9—10 միլիոն տոնն չուգուն:

Այդ 9—10 միլիոն տոնն չուգունից Կուղնեցիի գործարանին բաժին է ընկնում 1,2 միլիոն տոնն:

Կուղնեցիի գործարանի նման զիգանտներ չեն յեղել մինչև հիմա վոչ միայն ՌՍՀ Միութեան մեջ, այլև այդպիսիները չեն յեղել ու չկան յեվրոպական և՛ վոչ մի կապիտալիստական յերկրում: Չորս հրահարուցները յերկուսն արդեն կառուցված են և այդ յերկու հատը միայն տարեկան պիտի տան 1500 տոնն չուգուն. իսկ վորդկադի այդ քանակութունը կարելի լինի տեղափոխել գործարանից՝ հարկավոր է ամեն որ ունենալ 100 վագոն:

Հրահարուցի ցեխի ամբողջ աշխատանքը մաքսիմալ չափով մեխանիզացիայի յե յենթարկված: Գլորիչները, բեռնիչները, չուգունաձուլիչները և մյուսների ծանր աշխատանքը փոխարինում են այժմ մեխանիզմները: Հրահարուցի լիարեոնման համար կա հատուկ ավտոմատ, վորը կառավարում է միայն մեկ բանվոր:

Մարտեի ցեխի կարողութեան մասին կարելի յե դադարեց կազմել հետևյալ թվերից—ցեխը բաղկացած է 15 վառարանից. աշխարհում նման վառարաններ չունի և վոչ մի մետաղագործական գործարան. այդ պիտի մեծ վառարանի յուրաքանչյուր ձուլվածքը կազմում է 150 տոնն: Տարեկան այդ ցեխից մենք պիտի ստանանք 1.450 հազար տոնն պողպատ, վորի տեղափոխման համար կհարկավորվեն 90 հազար վագոն: Ամեն որ 5 մարչրուտային դնացքներ պետք է տեղափոխեն այդ մետաղը Կուղնեցիի զիգանտի հարթակից:

Մարտեի ցեխը նույնպես ամբողջովին մեքենայացված է: Ենորհիվ այդ հանգամանքի յե Կուղնեցիի զիգանտում մեկ մարտենավարի արտադրողականութունը 3—4 անգամ բարձր պիտի լինի, քան հարավային գործարաններում: Գիգանտի առաջին մասի մարտենի ցեխի շենքն էլ 8 վառարաններով արդեն սարքավորված է:

Գլոցածոների (պրակասնիչ) վիթխարի ցեխն էլ, վոր կահավորված է տեխնիկական տեսակետից զորեղ ու լավագույն դադրահանքերով, տարեկան կտա 1130 հազար տոնն պատրաստի շինվածքներ, վորոնց թվում 8 հազար կլիմետր սեխեր: Այդ սեխերը կրավականանան, որին նակ, յեթե մենք ամեն տարի յերկաթուղու դիմ անցկացնենք նույնքան հեռավորութեան վրա, ինչքան հեռավորութուն ունի Մոսկվան Իրկուսկից:

Կոքսի վառարանների չորս մարտկոցներն էլ կազմում են կոքսի ցեխը՝ ամեն մի մարտկոցը բաղկացած է 51 վառարանից:

Մագնիտոստրոյից հետո Կուղնեցիի գործարանի կառուցումն ամենախոշոր ու բարդ շինարարութունն է, վորը յերբեկից կարող եր տեսնել համաշխարհային պողպատի արդյունաբերութունը:

Ահավասիկ մի քանի թվեր ու համեմատութուններ ևս, վորոնք կարող են դադարեց տալ այդ նույն զիգանտի հսկայական մեծութեան մասին:

ինչ: Նրա առաջին մասի կառուցման համար մեկուկես տարիա ընթացքում հանված է 3½ միլիոն խ. մետր հող. բետոնի և յերկաթբետոնի աշխատանքներ են կատարված 250 հազար խորանարդ մետր, սարված են 18½ հազար տոնն մետաղյա կառուցվածքներ. հրատոկուն նյութեր գործադրված են 65 հազար տոնն, խամքաբեր—67 հազար տոնն. սարված է սարքավորում 35 հազար ուրբու: Ամբողջ գործարանի աշխատանքն անընդհատ տանելու համար հարկ է յեղել կաղմակերպելու մեծ քանակութեամբ ոժանդակ ու մշտապես սպասարկող ցեխեր, վորոնցից ամեն մեկն առանձին վերցրած մի խոշոր ձեռնարկութուն է ներկայացնում: Հրատոկուն ցեխը Ռ. Միութեան ամենամեծ ցեխերից մեկն է, վոր կահավորված է տեխնիկայի վերջին խոսքով և ոժտված է 60 հազար տոննի տարեկան արտադրողականութեամբ: Այդ ցեխն արդեն աշխատում ու արտադրանք է արտարկում: 42 հազար տոնն ձուլի կարողութեամբ ձուլի ցեխը ևս ամբողջովին պատրաստ է և մասամբ արդեն աշխատում է: Յեխը տալիս է չուգունի, պողպատի ու պղնձի ձուլ: Իսկ կաթսակամըրջային, մեխանիկական, մոդելային ու դարբնային ցեխերը, ինչպես և փայտամշակիչ կոմբինատն արդեն մի տարի յե վոր աշխատում են:

Կուղնեցիի գործարանի էլեկտրատնտեսութունը պետք է վոչ միայն վեր կաթսահանքային շրջանները, կառուցվող քաղաքը, ինչպես և սպասարկու բոլոր շենքերը ևս պետք է իրենց ենթակից ստանան Կուղնեցիի գործարանից: Այդ նպատակով էլ ահա շենվում է 108 հազար կլիմետր կարողութեամբ էլեկտրոկայանը: Կայանն արդեն տալիս է 60 հազար կլիմետր ենթակա:

Կուղնեցիի զիգանտին անհրաժեշտ է որակյան 10 միլիոն դուլլ Չուր. գործարանի ու բանվորական բնակավայրերի ջրմուղի ցանցի յերկարութունն էլ 77 կլիմետր է:

Գործարանական յերկաթուղային ցանցն էլ ունի ընդհանուր առմամբ մոտ 200 կլիմետր յերկարութուն:

Սակայն Կուղնեցիի զիգանտի շինարարութունը չի սահմանափակվում միայն իր հարթակի վրա կատարվող աշխատանքներով: Բացի գործարանից, նրան հարկավոր է նաև պատրաստել յերկաթահանքային տնտեսութունը: Յեվ ահա անմատչելի անտառներում ու դժվարանցանելի լեռնավայրերում—Տելբեսի շրջանում ամենածանր պայմանների գնով արդեն պատրաստվել են յերկու յերկաթահանքահան ձեռնարկութուններ: Նրանք էլեկտրիֆիկացիայի յեն յենթարկված, ադանովված կախովի ձուլարարով, մեքենայացված ու աշխատանքի պատրաստ, իսկ բացի այդ էլ, հարյուր կլիմետրանոց յերկաթուղազծով միացած Կուղնեցիի հետ:

150 հազար մարդ են բնակվում Կուղնեցիկոմբինատում: Դրանք բանվորներն են, ինժեներները, վարչա-տեխնիկական աշխատավորներն ու նրանց ընտանիքները:

Կադրերի պատրաստման համար էլ կաղմակերպված են մետաղագործական տեխնիկումներ, Փարբիկա-գործարանային դպրոցներ ու բարձրագույն ուսումնական հաստատութուններ:

Կուղնեցիի գործարանը Սիբիրում կառուցվող սոցիալիստական արդյունաբերութեան հիմնական բազան է: Յեվ արդեն հենց հիմա ահապին ձեռնարկութուններ են կառուցվում այն հաշվարկով, վոր իրենց մե-

տաղը պիտի ստանան Կուզնեցիկը: Ներկայումս Միրիքը ծածկվում է մեքենաչինական, գունավոր մետաղագործական, քիմիական գործարաններ, ինչպես և զորեղ ելեկտրոկայանների ցանցով, վորոնց բաղան հիմնականում պետք է լինի Կուզնեցիկի մետաղը: Նախագծված հարյուրավոր նոր հանքահորերն ու հանքասրահները, վոսկեարդյունարերությունը և յերկաթուղային գծերը—բոլորն էլ սպասում են իրենց մետաղն ստանալու Կուզնեցիկի մետաղագործական զիզանտից: Կուզնեցիկի մետաղն ընդլայնում է նաև կոլեկտիվացվող գյուղատնտեսութան տեխնիկական բազան:

Կուզնեցիկի գործարանի առաջին մասը կառուցված է: Այնտեղ ներքին տարվել են անընդհատ՝ անդամ ձմեռը, սիրիական 50 տասնաման սառնամանիքների պայմաններում: Կառուցողները ցուցարբերել են հեղափոխական չտեսնված խանդավառութուն: Հարյուրավոր բրիգադներ աշխատավորական հերոսութան որինակներով քաշում էլին իրենց հեռակից հաղարավոր կառուցողների և ցույց էլին տալիս աշխատանքի իսկական խալչելիկյան տեմպեր:

Կուզնեցիկի գործարանի առաջին մասի կառուցումը—դա կուսակցութան գլխավոր գծի հաղթանակն է: Վորպեսզի կատարվի Արևելքում նոր մետաղագործական բաղա ստեղծելու վերաբերյալ կուսակցութան դիրեկտիվը՝ Կուզնեցիկի գործարանի վրա պարտականութուն է ընկնում 1932 թվի ընթացքում ամբողջապես ավարտել այդ զիզանտի կառուցումը և իրագործել ծրագիրը՝ կատարելով մետաղաձուլումն արդեն պատրաստի հրահանգներով:

ՀԱՐՅ: Ի՞նչպես է ընթանում ավտո-տրակտորային արդյունաբերաբյան շինարարությունը:

ՊԱՍԱՍԵԱՆ: Մինչև հեղափոխությունը մեզնում բոլորովին չեն յեղել տրակտորներ արտադրող գործարաններ: Կայնաձավալ ցարական Ռուսաստանի դաշտերում աշխատելիս են յեղել միմյան 300 տրակտոր: Նրանք բերված են յեղել արտասահմանից և, հասկանալի յե, աշխատելիս են յեղել միայն կալվածատերերի դաշտերում: Ավտոչինության ասպարիզում ևս մեղ վոչինչ չի թողել ուսական կադրերի դր:

Իսկ 1931 թվին խորհրդային դաշտերն արդեն ակոսվում էլին ավելի քան 100 հազար տրակտորներով, վորոնց մեջ քիչ շեյին մեք իսկ խորհրդային գործարանների արտադրածները: Նույնպիսի տեմպերով է աճում նաև ավտոմոբիլային արդյունարերութունը: Իստի բուն նշանակութամբ մի դատարկ տեղում սկսելով խորհրդային ավտոմոբիլների արտադրության գործը և չորս տարի սրանից առաջ հաղիվ արտադրելով ընդամենը 250 հատ մեքենա, հետո—1931 թվին արդեն մենք ունեյինք տասնյակ հաղարավոր մեքենաների պարկ, իսկ 1932 թվին էլ պետք է արտադրենք 73 հազար ավտոմոբիլ:

Վ՞որ գործարաններն ու տրակտորները: Յե՞րբ են արդյոք նրանք կառուցվել և ի՞նչ են նրանք իրենցից ներկայացնում:

Առաջին անգամ տրակտորներ սկսել է պատրաստել «Կրասնիյ Պուտիլովից»-ի Լենինգրադի գործարանը: Այդ այն գործարանն է, վոր իբ 130-ամյա գոյության ընթացքում հեղափոխական փորձի մի դարբնոց է յեղել բանվորական շատուշատ սերունդների համար:

Յեվ ահա հենց նույն գործարանը յեղավ առաջինը, վոր փորձեց տրակտորներ շինելու: Առաջին տարին նա արտադրեց 74 տրակտոր, վորն, արդարև, համարվում էր խոշոր հաղթանակ: 3 տարուց հետո արդեն «Կրասնիյ Պուտիլովեցը» արտադրեց 623 տրակտոր, իսկ այնուհետև էլ՝ հնգամյակի առաջին տարում—3050 հատ, յերկրորդ տարում—8035 և յերրորդ տարում (1931 թվին)— 22 հազար: 1931 թվի նոյեմբերի 13-ին «Կրասնիյ Պուտիլովեցում» կոնվեյերից արդեն հանել են 34-հազարերորդ տրակտորը: Այդ նույն օրն էլ նրա բանվորները տոնել են տրակտորաշինության վերաբերյալ իրենց հնգամյա պլանի ժամանակից առաջ կատարելը:

Տրակտորների պատրաստման համար ներկայումս «Կրասնիյ Պուտիլովեցում» կառուցված են նորարձակ ցեխեր ու արհեստանոցներ՝ կահավորված ամերիկյան դադգյահներով: Դեռևս 6 տարի առաջ էլ այնտեղ մի հատուկ կայան է կառուցված՝ տրակտորների փորձարկման ու մանածաման համար: Վերջերս շինել են նաև մի յերկրորդ չուգունաձուլուրան մոտ 5 միլիոն ռուբլու արժույթով: Ամբողջովին վերակահավորված է նույնպես դարբնոցը և ամբողջ արտադրությունն էլ մեխանիզացիայի յենթարկված: 1931 թվից սկսած գործարանի ծրագրի կեսը կազմում է տրակտորաշինությունը: Նրա կոնվեյերից որակյան դուրս է դալիս վոչ պակաս քան 80 տրակտոր: Յյժմ արդեն «Կրասնիյ Պուտիլովեցը» բանվորներն որակյան արտադրում են ավելի շատ տրակտորներ, քան վերջիններիս արտադրության առաջին տարում ամբողջութամբ վերցրած: Այդ տեմպերը գործարանն էլ ավելի պիտի ավելացնի, վորովհետև 1932 թվին նա յերկրին պիտի տա 25 հազար տրակտոր:

Սակայն «Կրասնիյ Պուտիլովեցը» բանվորները չեն պայքարում միայն քանակի համար: Նրանք աշխատում են նաև էլ ավելի կատարելագործել արտադրվող տրակտորը: Այս բնագավառում ևս գործարանն ունի արդեն իր խոշոր նվաճումները: Վերջին նոր մարկայի տրակտորները փորձարկման ժամանակ տվել են լավ արդյունքներ:

Յերկրորդ տրակտորային գործարանն է համարվում Ստալինգրադի Կարծրագրոցը:

Այդ՝ աշխարհում խոշորագույն համարվող տրակտորային գործարանը կառուցվել է մի չտեսնված կարճ ժամանակում—8 ամսում: Նրա ցեխերի յերկարաշար կորպուսները սարքավորված են արտասահմանյան վառահեղ դադգյահներով. գործարանը կառուցված է այն հաշվարկով, վոր տարեկան պիտի տա 50 հազար տրակտոր: Ամեն օր նրա կոնվեյերից պետք է դուրս գա 144 տրակտոր:

Համարյա մի ամբողջ տարի շեր կարգավորվում աշխատանքն այդ գործարանում: 1931 թվի ոգոստոսից սկսած միայն Ստալինգրադի գործարանը կատարելով ընկ. Ստալինի վեց ցուցմունքները, լիկվիդացիայի յենթարկելով զիմադրկությունն ու «ձախ» հավասարեցումը, ինչպես և բանվորներին ամբացնելով իրենց դադգյահներին, կարողացավ հասնել վճռական հաջողությունների:

1931 թվի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին գործարանը արտադրում էր որակյան 100 տրակտոր, իսկ դեկտեմբերի վերջում—120-ական հատ: Պայքարն այդ ուղղությամբ դեռ չի վերջացած: Ստալինգրադի կոնվեյ-

յերից որական պետք է դուրս գան 144 տրակտոր: Այդ թիվն արդեն մտել է նրա 1932 թվի ծրագրի մեջ:

Մենք կառուցել ենք արդեն նաև տրակտորային յերրորդ գործարանը: 1931 թվի Հոկտեմբերի մեկին Սորհրդային Միության բանվոր դասակարգն ու միլիտանտները կոլտնտեսականները տոնեցին Սարկովի տրակտորային գործարանի գործարկումը: Սարկովի գործարանը կարծես Ստալինգրադինի յերկվորյակն է. տարեկան նա ևս պետք է տա 50 հազար «Ինտերնացիոնալ» տրակտորներ:

Ավելի քան 100 միլիոն ուրբիլ յե ներդրել մեր յերկիրը Սարկովի տրակտորային գեղանտի շինարարության գործում: Նրա մեծութան մասին կարելի յե գաղափար կազմել հենց միայն նրանից, վոր միևնույն տանիքի տակ կառուցված մեխանիզմահամալը ու գործիքաշինական ցեղերը գրավում են կես կիլոմետր յերկարությամբ ու 111 մետր լայնությամբ մի տեղ:

Շնորհիվ բանվորների և ինժեներ-տեխնիկական կադրերի խանդավառության ու յեռանդի՝ Սարկովի գործարանը կառուցվել ու սարկել է կուսակցության ու կառավարության նշանակած ժամկետին, այն է՝ 15 ամսվա ընթացքում: Ստալինգրադի գործարանի աշխատանքի առաջին ամիսներում տեղի ունեցած սխալները շատ բան սովորեցրին Սարկովի գործարանին: Միանգամից կարգ սահմանելով արտադրության մեջ և զբաղված կերպով ուժեղացնում է իր տեմպերը: 1931 թվի վերջում գործարանի մեծ կոնվեյերից որական դուրս ելին գալիս մոտավորապես 30 տրակտոր ու այլնի քան 20 մոտոր, իսկ 1932 թվի Հունվարի սկզբներում արդեն՝ 40-ական տրակտոր և 30-ական մոտոր որական: 1932 թվին Սարկովի տրակտորի գործարանը պետք է աշխատի իր լիակատար դոժով:

Գյուղացիական մանր ու մանրագույն անհատական տնտեսությունները շեյին կարողանում ուղտվել բարդ մեքենաներից: Իսկ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, ինչպես և խորհանտեսությունների ու կոլտնտեսությունների ամձման հետ միասին այժմ արդեն տրակտորը—այդ «պողպատե ձին» իր արժանի տեղն է գրավում: Ներկայումս վերոհիշյալ յերեք գործարաններն որական արտադրում են 200 տրակտոր, բայց դարձյալ վերջիններս բավականություն չեն տալիս: 1932 թվին յեթե այդ գործարաններն որական 300 տրակտոր անգամ արտադրեն՝ դարձյալ նրանց չեն բավարարի մեր կարիքը: Այդ է պատճառը, վոր մենք՝ չսահմանափակվելով այդ կառուցված ու արդեն աշխատող գործարաններով, կառուցում ենք ևս մի ուրիշը Սիբիրում—Չելյարինսկում:

Աշխարհի ամենախոշոր ամերիկյան «Կատեր Պիլեր» ծանր տրակտորների գործարանը տարեկան դուրս է բերում 25 հազար թրթուրավոր տրակտորներ: Մեր Չելյարինսկի գործարանը նրանից բավականաչափ մեծ է: Ըստ ծրագրի նա պետք է տա տարեկան 40 հազար վաթսուս ուժանոց տրակտորներ: Սորհրդային յերկրի խորհանտեսությունների ու կոլտնտեսությունների գաշտերն այդպիսով ամեն տարի պիտի ստանան ևս 2400 հազար ձիու ուժ՝ փակված պողպատե մեխանիզմների մեջ:

Չելյարինսկի տրակտորի գործարանը նստելու յե 200 միլիոն ուրբիլի: Փորձնական գործարանն արտադրել է արդեն իր վաթսուս ուժանոց

առաջին տրակտորները: Կառուցման աշխատանքների զգալի մասն արդեն կատարված է, իսկ բավականին մեքենակառուցվածքներ էլ տարված:

Կուսակցությունը ցույց է տվել, վոր «Չելյարինսկի տրակտորի գործարանի իրժամանակյա ավարտումն ու գործարկումը մեկն էր հանդիսանում ՍՍՀ Միության ժողովրդական տնտեսության առկա ծառայած կարևորագույն խնդիրներից»: Կուսակցության այդ ցուցմունքը պետք է կատարել: Չելյարինսկի տրակտորի գործարանը պետք է պատրաստ լինի 1932 թվի նոյեմբերի մեկին: Այդ կախված է թե՛ նրա կառուցման վրա այժմ աշխատող 15 հազար բանվոր-շինարարների և թե՛ նրան նյութեր ու կահավորություն մատակարարող գործարանների բանվորների յեռանդից:

Մենք ստեղծում ենք ավտոմոբիլային ամենախոշոր արդյունաբերությունը Յելյոպայում:

